Հուսիկ Արա

Երկբա

Խավարը երկար էր.
չհավատացինք, որ ցայգ է
և լուսաբաց է լինելու:

Ծանր նստել էր մեր մեջ մի կույտ ցեխ,
որ նման չէր կավին նախամարդու,
և վախ կար չարի հորինած մուտանտից:

Ձեռքս բռունցք պարզած վանկարկել եմ բառեր՝
շուրթերիս վրա երգ,
ատամներիս տակ սեղմած տագնապ.
անցել եմ երիզներով փողոցների՝
հանրահավաք, ցույց ու երթեր,
և վստահ չէի,
որ քո կորցրածն եմ գտել ես:

Երբ քայլում էիր ջրերի վրա,
թերահավատ էի մակույկում նստած.
միչդեռ պիտի գայի ընդառաջ,
ձեռքդ բռնեի աներկբա,
որ չսայթաքեիր դու,
ու չընկնեի ես,
և ասեիր՝

քո հավատը փրկեց քեզ:

Երեկ՝ խավարում հոգնած,
այսօր՝ լույսերի երկիր.
մե՛կը հավատաց մեր մեջ,
և ազատ ենք: